

from his honor.⁶⁸ He began hunting down humans for perdition, enslaving them by vain hopes, by the misleading spirit of alienation — drawing them away from the love of God into diverse passions for wickedness.

¹⁴⁹Should someone ask, “Why did God allow Satan to spread so much misleading lawlessness?” Listen. It is up to the sovereign will of angels and humans, granted by God. It is their prerogative to do what seems best to them; and accordingly, they shall receive their recompense from the Creator of all creatures, as time will tell, either for glory or for torture. ¹⁵⁰Just like death came to reign because of Adam’s transgression,⁶⁹ so Satan lords it over sinners. ¹⁵¹“For men preferred delusion,” (Scripture) says, “for this reason God sends them the effects of delusion... so that they will be condemned... for they delighted in wickedness” (2 Thess 2:11-12). ¹⁵²However, because of his providential love, he did not leave his creatures to

perish: by the coming of his Son, who came into the world to save sinners from servitude to Satan, through faith in the redemption by the glorious Son of God. The tyranny of sin’s reign over humans ended with the appearance of the Savior.

¹⁵³And by grace, by faith in the Holy Trinity, they shall reign, those who have found forgiveness through the (baptismal) font and through the body and blood of Christ, having received the Holy Spirit who spreads gifts in streams to his creatures. ¹⁵⁴Thereafter, those justified by faith shall stand in peace before God,⁷⁰ those who believed in the inheritance attained through Jesus Christ, whose immutable glory is reaffirmed by his willful crucifixion. Through death he abolished death,⁷¹ and through his resurrection he raised us from death because of sin, so that we may stand in the newness of life and abide in the hope of the resurrection;⁷² to the glory of the Most Holy Trinity, now and always and to the ages of ages. Amen.

70 Echoing Rom 3:28; Gal 2:16; 3:11, 24 (cf. Disc. 15.62 and 18.43, where ճշմարտեայր [ēšmartēalk] is used instead of արդարացեայր [ardarac'ealk] as here and in Disc. 23.108; and Disc. 17.27, where the equally specific արդարսր ֆատտով [ardars hawatov] is used).
71 Allusion to Heb 2:14.
72 See Rom 6:3-5; Phil 3:10-11; cf. 2 Tim 1:10.

68 Allusion to Isa 14:12-15; Ezek 28:1-19. Cf. Disc. 6.25-41 and 20.70-84, on Satan’s fall as a result of free-will choice.
69 Allusion to Gen 3:17-19; cf. Rom 5:12-21; 1 Cor 15:21-22.

ԳՐԱԲԱՐԻ ԱՅԼ ԲԱՌԸ (Ե. ԴԱՐ)

Գորգեն Խաչատրեան

Հայերէնի Հազարաւոր բառերից ուսումնասիրութեան առումով առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում նրանք, որոնք, աչքի ընկնելով Հնութեամբ, Հայոց լեզուի զարգացման բազմազարեայ ճանապարհին ոչ միայն արտայայտութեան եւ բովանդակութեան պլաններում են փոփոխութիւնների ենթարկուել, այլեւ ծառայել են բառապաշարի Հարստացման գործուն միջոց՝ Հանդէս գալով թէ՛ ածանցման եւ թէ՛ բառաբարդման (Համադրական եւ վերլուծական կազմութիւններ) գործընթացներում: Դրանցից է Հայերէնի բնիկ այլ բառը¹, որը գրաւոր աղբիւրներում վկայուում է դեռեւս Ե. դարում՝ գործածուելով թէ՛ Հայ Հեղինակների երկերում, թէ՛ թարգմանական գրականութեան մէջ:

Յետագայ դարերում բառս աւանդուել է ոչ միայն այլ, այլ եւ այդ՝ տարբերակներով², այլեւ ենթարկուել նոր պատ-

մական Հնչիւնափոխութիւնների. միջին Հայերէնում, երբ վերջնականապէս յաղթանակել էր այլ-ը, զուգահեռաբար սկսում են գործածուել նրա ալ, էլ տարբերակները նոյնպէս, բազմաթիւ անգամներ վկայուել է նաեւ դրանց Հետ աղբիւրներ ունեցող³ արտի/այլուի/այլի/էլի մակբայը, որոնք Հիմնականում պահպանում են այլ-ի՝ գրաբարում ունեցած իմաստային եւ գործառական առանձնայատկութիւնները: Ահա օրինակներ Հայրենիքից⁴ Երբ ես ի քէնէ գատիմ՝ Քանց մեռնիմ այլ («որիշ») ճար չի լինի (էջ 46): Ոնց որ քունըն գիս տանի՝ Ամանաթ, որ այլ («այլես») չի խօսիս (էջ 46): Դու այլ («ես») իմ կրակն անկնիս, Լուկ հապա ինձի ողորմիս (էջ 61): Չաշխարհս այլ ի յափ առի, Հայեցայ քան գհայելի. Դարձայ՝ ի այլ («դարձեալ») ի վայր դրի, Չի գտայ արտով սիրելի (էջ

«իմ» որով ունեցանք երկուքի տեղ չորս, զ, շ, ղ, շ: Լ. Աճառեանը կրկնում է Ա. Չալըխեանին. «... ճիւղ ձեռագիրներում, - գրում է նա, - (այլ բառը - Գ. Խ.) գրումս է հասարակապէս այլ, այդ, այդ՝ ձեւերով, որոնց մէջ հնագոյնն է այդ» (Լ. Աճառեան, Աջ. աշխ., էջ 168): Լ. Մուրադեանն այս կապակցութեամբ գտնում է. «Լ-ի եւ ղ-ի գրութեան շփոթը արձանագրում է մեզ հասած առաջին իսկ ձեռագրերում: Գրութեան այնպիսի ձեւեր, ինչպիսիք են՝ թոյղ (թոյլ), գայղ (գայլ), այղ (այլ) ... եւ այլն, արդէն հանդիպում են Լազարեան ճեմարանի 887 թուականի գրչութեամբ հասած Աւետարանում: Գրութեան մէջ նման փոխանցումներ պնտոհետեւ պատահում են նաեւ այլ ձեռագրերում՝ ընդհուպ մինչեւ XII դարի վերջերը: Գրութեան այդ ձեւերը անլի տիպական են յաճախակի են յատկապէս IX-XI դարերի ընթացքում գրումս կամ ընթորիմակումս ձեռագրերում: Աւելի ուշ շրջանում ստեղծումս գրատր աղբիւրներում այդ երեւոյթը ունի եզակի արտայայտութիւն...» (տե՛ս Լ. Գ. Մուրադեան, Հայոց լեզուի պատմական քերականութիւն, Բու. Ի, Երեւան, 1982, էջ 211):
3 Լ. Աճառեան, Աջ. աշխ., էջ 168:
4 Ա. Մնացականեան, Հայրենիք, Երեւան, 1995:

68): Երկու խօսք գանկատ ունիմ, Ջայն ասեմ, լուկ այլուի («դարձեալ») գնա (էջ 83): Սրտիս էլ («նոյնպէս») է նեղ կու գայ, Որ հագնիմ գրիմ կուելոյ (էջ 305): Մարդ չեղնամ, թէ էլ («դարձեալ») եար սիրեմ, Կամ զքո սէրն մոռանամ (էջ 90): Յէ՛յնեկ է գիս 'ի յէյնե՛կ էլի («դարձեալ»)։ Փրոեմ քեզ մախմուր խալի (էջ 149) եւ այլն:

Այլ-ը աշխարհաբարին աւանդուել է ե՛ւ առանց փոփոխութեան (այլ), ե՛ւ ալ եւ էլ տարբերակներով, որոնցից այլ-ը տեղ է գտել երկու գրական հայերէնների բառապաշարներում, էլ-ը՝ արեւելահայերէնում, իսկ ալ-ը՝ արեւմտահայերէնում⁵:

Այլ բառի արժեւորման առաջին փորձերը կատարուել են դեռեւս նախորդ երկու դարերում: Ըստ հայկազեան բառարանի կարճառօտ ձեւակերպումների՝ յիշեալ բառը զբարբարում կարող է հանդէս գալ ածականի (այլ), մակբայի (այլ) եւ շողկապի (այլ կամ այ՛ղ⁶) դերով⁷: Մակբայների շար-

5 Պ. Ծիգմեճեանի կողմից (Պետրոս Վարդ. Ծիգմեճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. Ա, Հալէպ-Սուրիա, 1954) այլ-ը (էջ 164) դիտուում է ածական («որի՞» իմաստով), մակբայ (այս դէպքում այն շեշտակիր է՝ ա՛յլ՝ «դէտ», «այլեւս», «դարձեալ», «մէլ մ՛ալ» իմաստներով) եւ շողկապ («բայց», «հասպա», «սակայն», «եթեւէն» իմաստներով), ալ-ը (էջ 36) դիտուում է շողկապ («նաեւ», «եւս», «դէտ», «աւելի» իմաստներով) եւ մակբայ (այս դէպքում այն շեշտակիր է՝ ա՛յլ՝ «այլեւ ոչ» իմաստով), իսկ էլ-ը (էջ 332) դիտուում է ածական («այլ ուրի՞» իմաստով): Ըստ Ա. Սարգսեանի՝ գրական արեւմտահայերէտում այլ-ը հանդէս է գալիս հակադրական շողկապի գործառնությով՝ «ճանակելով «բայց», «այլեւ» (Ա. Սարգսեան, Արեւմտահայերէնի բառարան, Երեւան, 1991, էջ 17), ալ-ը մակբայի գործառնությով՝ «ճանակելով «այլեւս», «նաեւ» (էջ 9): Ռ. Սաքապետոյեանի բառարանում այլ-ը չի ընդգրկուել, իսկ ալ-ը հանդէս է գալիս մակբայի եւ շողկապի գործառնությով՝ «ճանակելով, համապատասխանաբար, «այլեւս» եւ «նաեւ», «եւս» (Ռ. Սաքապետոյեան, Արեւմտահայերէն-արեւելահայերէն ճոր բառարան, Երեւան, 2011, էջ 15):

6 Լեզուական աղբիւրներից քաղուած օրինակներում պահպանել ենք բնագրերի ուղղագրութիւնն ու կետադրութիւնը:

քում նշուում են նրա «նաեւ», «եւս» նշանակութիւնները նոյնպէս⁸: Վերոբերեալը մասնակի փոփոխութիւններով գտնուում ենք Մ. Աւգերեանի յայտնի բառարանում, որտեղ իբրեւ ածական նշուում է այլ, որպէս մակբայ՝ ա՛յլ (չկայ նշում «նաեւ», «եւս» նշանակութիւնների մասին) եւ իբրեւ շողկապ՝ այլ կամ այլ՛⁹: Յետագայում «զբարբարի շողկապներ» մենագրութեան մէջ¹⁰ Պ. Շարաբխանեանը ներհակականների շարքում քննութեան է առել նաեւ այլ-ը:

7 Ա. Աբրահամեանը, ի տարբերութիւն հայկազեան բառարանի հեղինակների, այլ-ը (միւս-ը եւս) իրաւացիօրէն համարում է դերանուն (Ա. Աբրահամեան, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 89-90):

8 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1, Վեներտիկ, 1836, էջ 82-85:

9 Մ. Աւգերեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Անթիլիաս, 1988, էջ 53: Թէեւ այդ՝ը երկու բառարաններում էլ նշուում է որպէս այլ շաղկապի տարբերակ միայն, սակայն լեզուական փաստերը վկայում են, որ այդ-ը եւ այդ-ը՝ այլ-ի տարբերակ են ծառայում՝ անկախ արանցի՝ այլ-ը ոչ միայն իմաստ է արտայայտում, թէ ճիշտակամ: Այսպէս՝ կորիւնի «վարք»-ի Գ բնագրում (Տառնակաձեւ տարբերակ, էջ 265-272), որն ընդօրինակուել է ԺԲ. դարում (Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 228), բառն ածականի եւ շողկապի գործառնությով հանդիպում է ե՛ր այլ, ե՛ր այլ ձեւերով: Հ. Աճառեանի վկայութեամբ. «կրկնագիր Ագաթանգեղոսի մէջ, 30 անգամ գործածուած է այդ եւ ո՛չ մի անգամ այլ կամ այդ՛» (Հ. Աճառեան, Աշխատք, էջ 168): Ահաւասիկ այդ-ով օրինակներ է. դ. հեղինակներից նոյնպէս՝ «Քաղցի Արամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն, եւ սա ի բերանոյ Աստուծոյ անեալ սաի պատուէր, այդ եւ յանցուցեալ եւ ի թաքստեան եղեակ գործն եւս յաստուծոյ՝ եւ ոչ յայդ ունեք հարցանի» (ՓՏ, 903): «Ոչ բնութիւնս երբ, այդ պատիժս ընդ յանցանացն առընկալաւ, եւ այդովքն [այլ] արարածք գրատաստան հատուցանէ» (ԴԼ, 1133): Այդ տարբերակը գտնուում ենք նաեւ բառարանագրութիւններում: Ահա, օրինակ, 981 թ. թղթեայ հնագոյն ձեռագիր մատենանում կեղ գտած լեզուական փաստերից մէկը՝ «Ետ ալլու մեղաւ ժողովորդն եւ մատնեցան այդ զգ՝ գեաց...» (ԴԲ, էջ 38ա):

10 Պ. Շարաբխանեան, Գրաբարի շողկապները, Երեւան, 1960, էջ 97:

Հասկանալի պատճառով լեզուաբանի ուսումնասիրութեան զաշտից դուրս են մնացել այլ-ի խօսքիմասային միւս դրսեւորումները, քանի որ նա անդրադարձել է այլ բառի միայն շողկապական կիրառութեանը, այն էլ՝ ոչ բոլոր դէպքերին¹¹:

Սոյն յօդուածով նպատակ է հետապնդուում ուսումնասիրելու այլ բառի խօսքիմասային անցումները զբարբարում¹², ինչպէս նաեւ արժեւորել նրա դերը նախադասութեան անդամները եւ նախադասութիւնները կապակցող միաւորների (շողկապների եւ շողկապական բառեր, յարաբերեալներ) շարքում, որտեղ նա հանդէս է գալիս միայնակ կամ վերլուծական մի շարք կազմութիւններում¹³:

Լեզուական փաստերը վկայում են, որ Հէնց Ե. դարում այլ-ը առանձնանում է գործածութեան բարձր յաճախականութեամբ եւ տարբեր կիրառութիւններում կարող է արտայայտել մի դէպքում նիւթական, միւս դէպքում՝ ոչ նիւթական իմաստ՝ գործածուելով միայնակ, այլ բառերի եւ բառաձեւերի յարադրութեամբ կամ զուգադրութեամբ: Ահաւասիկ համապատասխան օրինակներ՝ Այլ դուք վասն տեսնո՞ւմք ձերոյ զյախշտակութիւնն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. զի ձեզ յերկիսն պահի զանձն՝ որ ոչ անցանէ (Բուզ., 65): Վասն այսորիկ եւ մեք մինչեւ ի մահ լիցուք վկայք կենդանութեան քոյ, զի յատնեսցուք ի թիւ վկայից քոց. զի այլ զի՞նչ ինչ արդեալք կարիցեմք առնել դարձուածս փոխարէն բարեացն որ ի քե՛ս

(Ագաթ., 58): Ի կորուստ մատնեցար եւ այլ ոչ եւս իցես յախտեան (Եզեկ., Իէ, 36): Թէպէտ եւ զանդրդիմակալ չափաւորութիւն իրեանց գիտէին, տեսանելով ծովացեալ գնդան Պարսից զամենայն դաշտն առհասարակ՝ այլ սակայն եւ ոչ կարի զարհուրեալք փախչել փութային (Փարպ., 144) եւ այլն:

Աւելին, այլ-ը դեռեւս Ե. դարում նոյնիսկ միեւնոյն նախադասութեան մէջ կարող է կա՛մ հանդէս բերել տարբեր խօսքիմասային յատկանիշներ, կա՛մ միեւնոյն խօսքի մասի սահմաններում արտայայտել բազմիմաստութիւն¹⁴:

Այսպէս՝ ստորեւ բերուող նախադասութեան մէջ այլ բառն առաջին դէպքում նիւթական իմաստ է արտայայտում (դերանուն է), երկրորդ դէպքում՝ ոչ նիւթական (շողկապ է)՝ Բայց այլ ոչ ինչ գործ արութեան եւ քաջութեան եցոյց. այլ ուտելեաց եւ ըմպելեաց պարսպեալ, մօրից եւ եղեգնապարակաց թափառեալ շրջէր եւ առապարաց (Նոր., 137): Իսկ հետեւեալ նախադասութիւնների մէջ այլ-ը տարբեր շողկապների իմաստներ է արտայայտում՝ Այլ (= «իսկ»/«բայց» - Գ. Խ.) վասն իմ ոք կոծ մի՛ դիցէ. եթէ դնէ ոք, մա լիցի դատապարտ. այլ (= «եւ» - Գ. Խ.) ոչ եթէ յետ մահու իմոյ իմ իշխանութիւնն ինչ է սաստել, զի գոր ոչն կամիմ մի՛ արասցեն. այլ (= «այլ» - Գ. Խ.) ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ (Բուզ., 218): ...այլ (= «բայց»/«եւ» - Գ. Խ.) ոչ երբեք սերմանեցեր զգարի եւ հնձեցեր ցորեան. եւ ոչ սերմանեցեր կորեակ, եւ հնձեցեր հաճար. այլ

11 Նշուած շարքում Պ. Շարաբխանեանը բերում է նաեւ այլ սակազ-ը՝ որպէս առանձին ներհակական շողկապ:

12 Ծանօթագրութիւնների բաժնում այդ դրսեւորումների հետ կը համեմատուեն ժամանակակից արեւելահայերէնի համանիշ քերականական իրողութիւններ:

13 Առանձին ուսումնասիրութեան միջ կարող են դառնալ նաեւ այլ-ի մասնակցութեամբ կազմուած շուրջ հարիւր յիսուն համադրական բարդութիւններն ու արանով բաղադրուած տասնեակ դարձուածային միաւորները:

14 Հմմտ. ժամանակակից արեւելահայերէտում՝ Չեմ խօսիլ քեզ հե՛տ ... Դուք էլ խօսեցէ՛ք, դուք էլ պատմեցէ՛ք Չեմ սիրիլ քեզ է՛լ ... (ԹԹ, 1, 102):

Եւ Ձեր անդունդներով թկէք չափուեցէ՛ք, էս է ունեցածն աստղծու տակին, Դուք է՛ր էք, տեսնեմ, էճքան մեծ ու խոր, էլ չըկայ, ա՛խպեր, որտեղի՞ց բերեճք (ԹԹ, 1, 70): Ինչքան իմ հոգու թախիծն ահաւոր ... (ԹԹ, 1, 62):

(= «այլ» - Գ. Խ.) գոր սերմանեցեր, զնոյն հնձեցեր (Եղն., 294) եւ այլն:

1. Նիւթական իմաստի դէպքում այլ բառն արտայայտում է չտարբերակուած յատկանիշ՝ «ուրիշ» կամ «այլեւս» իմաստներով: Օրինակ՝ Իսկ էին եւ այլ («ուրիշ» - Գ. Խ.) սուրբք, արք եւ կամայք, որ ընդ մոսս եկեալ էին, աւելի քան զեալթանասուն մարդ (Ագաթ., 112): Եւ մեծ եղև ընդ ամենայն տիեզերք փորձութիւնք անդութեանց վտանգի քան զառաջին թագաւորացն. եւս չար որ ի հեթանոսացն պատերազմն եւ խոտվութիւնքն յառաջագոյն յառնէր առ այլովք («ուրիշ» - Գ. Խ.) դիցապաշտ մեհենաւեր թագաւորոք (Բուզ., 76): մի՛ այլ («այլեւս» - Գ. Խ.) վասն այդպիսի իրաց հարցանէք ցմեզ, այլ զինչ եղեալ է ի մտի ձերում վասն մեր՝ կատարեցէ՛ք (Եղիշէ, 195) եւ այլն:

Նիւթական իմաստ արտայայտելու դէպքում այլ բառը կարող է ցոյց տալ՝

1.1. առարկայի չտարբերակուած յատկանիշ¹⁵

Եւ Հարկ եղած ժամանակ ինքնին Հովովուելի¹⁶, ինչպէս առարկայի յատկանիշ ցոյց տուող միւս բառերը՝ Համաձայնութեան եղանակով կապակցուելով գերադասանդամին: Առարկայի չտարբերակուած յատկանիշ ցոյց տուող այլ բառը թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական կառոյցներում կարող է գործածուել՝

15 Հմմտ. ժամանակակից արեւելահայերէնում՝ Եւ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար կարօտակէզ երգէ հիմի Սիրտս՝ լցուած տարիների սեղմ արճիճով ու կապարով (Ե2, 47):

Մարդը խիղճ ունի՝ Էսպէս է ասում. Սըրանից արեւ էլ ի՞նչ էք ուզում (ՅԹ, 1, 71):

16 Անթրաթեշտութեան դէպքում այլ բառը կարող է գործածուել նաեւ փոխանուանաբար: Օրինակ՝ ... մի՛ ամենեւին յայլոյ ինչ ակն դնել կամ ցանգալ (Բուզ., 98): Եւ այլ եւս բազում քան զայս խաւսեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ գլխիկայր (Ագաթ., 60): Վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ, ... կասկածէր նա՛ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ (Բուզ., 113):

1.1.1. միայնակ, ինչպէս՝ Լաւ էր լեալ՝ թէ մոյնպիսի կացեալ էր անհեղեղ եւ անարգաւատր, քան զայլ յարգասիսն եւ ի կերպարանս, եւ լինել պատճառ չարեաց այլոց (Եղնիկ, 29): եմ որք ի կապանս եմ. եմ որք ի փիղակէս եմ, եմ որք յաքսորս, եւ եմ որք յայլ բռնութեան եմ (Բուզ., 86): Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յովով անգամ մուսճեալ թագաւորութեամբ (Խոր., 10):

1.1.2. Եւս վերաբերականի յարադրութեամբ, որն այլ-ի իմաստին Հաղորդում է սաստիկական երանգ, ինչպէս՝ Եւ այլ եւս եւթն օր, եւ ածից եւս անձրեւ ի վերայ երկրի զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր (Մենգ., է, 5)¹⁷: Եւ յայտ ամենայնի վերայ այլ եւս չարութիւն խորամանկեաց (Եղիշէ, 22): Եւ կամ կաթի ջրոյն կարաստին Ղազարու եւ կամ շիջեալ ջահիցն իւղ եւ որ այլ եւս եմ անշրջելիք (Յաճախ., 86) եւ այլն:

Արդիւնքում կազմուել է կայուն կապակցութիւն, ինչի մասին վկայում է եւ այն, որ եւս վերաբերականը գործածուում է այլ բառի թեք ձեւերի Հետ նոյնպէս՝ Թէպէտ եւ ստուգեալ գիտաց զբազմաց այլոց եւս զերկմտութիւն, որ դեռ եւս ընդ մնա միաբանեալք էին, քաջալերեցաւ յամձն իւր եւ քաջալերեաց զգարսն (Եղիշէ, 99): Յամին երրորդի թագաւորութեանն իրում արար թագաւորն կոչումս սիրելեաց իւրոց եւ մեծամեծաց, եւ այլոց եւս ազգաց՝ պարսից եւ մարաց (Եսթ., Ա, 3): Պատրէր գոմանս ի մոցանէ ոսկւով եւ արծաթով, եւ զբազումս այլով եւս առատ պարգեւաւք ... (Եղիշէ, 17)¹⁸:

1.1.3. Շաղկապական բառի դերով, երբ ոչ ժխտական մասնիկի եւ իմն, ինչ կամ որ անորոշ գերանունների մասնակցութեամբ

17 Աստուածաշնչեան մէջքերումները յղում ենք հանրայայտ համառոտագրութիւններով:

18 Առարկայի յատկանիշ ցոյց տուող այլ-ը կարող է գործածուել նաեւ փոխանուանաբար՝ Եւ գայլս եւս ոչ կարաց թելի. ոչ զհարս, եւ ոչ զագգան, որ էին յիւրայէլէ, որդիք Ղաղանայ (Եզր., Ե, 37):

կազմում է բաղադրութիւններ, Համապատասխանաբար՝ ոչ այլ իմն, ոչ այլ ինչ եւ ոչ այլ որ՝ նրանց Հետ կապակցուելով Համաձայնութեան եղանակով¹⁹: Վերջիններս Հանդէս են գալիս բարդ ստորադասական կառոյցներում՝ գլխաւոր եւ երկրորդական նախադասութիւններն իրար կապակցող, Համապատասխանաբար, «յարաբերեալ - շաղկապ» զուգադրութեան մէջ կատարելով յարաբերեալի գործառոյթը: Ոչ այլ իմն, ոչ այլ ինչ, ոչ այլ որ յարաբերեալներին երկրորդական նախադասութիւններում կարող են զուգադրուել՝

ա) եթէ ոչ շաղկապը, ինչպէս՝ Զարթեալ Յակոբ եւ ասէր. Տէր էր ի տեղոջ յայսմիկ, ահեղ իմն է տեղիս այս եւ ոչ այլ ինչ է սա, եթէ ոչ տունն Աստուծոյ եւ դուռն երկնից (Մեկն., 847)²⁰:

Երկրորդական նախադասութեան մէջ շաղկապի գործառոյթով Հանդէս է գալիս նաեւ եթէ ոչ որ բաղադրութիւնը՝ Զի ոչ այլ ինչ նշանակէ երեւութիցս շարժումն, եթէ ոչ որ ի Հպկազանէն Տիգրանայ հասանելոց է մեզ բռնութեան յարձակումն (Խոր., 77):

Եթէ ոչ շաղկապական բաղադրութիւնը, երկրորդական նախադասութեան մէջ գործածուելով, զուգադրում է նաեւ գլխաւոր նախադասութեան մէջ յաջաբերեալի գործառոյթով Հանդէս եկող ոչ ժխտական մասնիկի, այլ ցուցական գերանունն ուղղական եւ իմն անորոշ գերանունն գործիական (իւրիք) Հոլովների մասնակցութեամբ ձեւաւորուած ոչ այլ իւրիք բաղադրեալ յարաբերեալին: Օրինակ՝ ոչ այլ իւրիք է հնար մատչել առ Աստուածորդին, եթէ ոչ անմեղութեամբ եւ արդարութեամբ եւ սրբութեամբ՝ յաղանակերպ մնանութեւն անտի առեալ զկերպարանս անձին բերիցն

19 Ժամանակակից արեւելահայերէնում սրանք ճարտասանական ոճի դրսեւորման միջոցներ են:

20 Հմմտ. Ահեղ իմն է տեղիս այս. եւ ո՛չ է սա, եթէ ո՛չ տունն Աստուծոյ (Մճն., ԻԸ, 16-17) եւ ... как страшно мне место! это не иное что, как дом Божий.

(Ագաթ., 208): ոչ այլ իւրիք կարիցէք դուք զաստուած ընդ ձեզ հաշտեցուցանել կամ մերձենալ առ Աստուած, եթէ ոչ բարեխաւսութեամբ աղաւթից մոցա (Ագաթ., 285):

բ) Բայց շաղկապը²¹, ինչպէս՝ Եւ ոչ այլ ինչ գոյր թոշակ ընդ մոսս, գոր ունէին, բայց մի ոմն ի մոցանէ ունէր արուեստ ապակագործութեան (Ագաթ., 86): Ոչ այլ ինչ աւելի գտանես, բայց միայն գոսկ զաստանայ տեսանես զմիտս բամբաստողացն (Մանգ., Ճառ., 1204): Ի լեառնէ ի լեառն ոչ այլ ինչ լսիր, բայց վայ զվայի ճչեալ (Հռիփ., 2195)²²:

գ) Քան (թէ) շաղկապը, ինչպէս՝ ... ոչ այլ ինչ կամի Սմբատ քան թէ զարին քո (Խոր., 168): Զի ոչ այլ ինչ, քան զբնական իմաստութիւն Աստուծոյ իմանալ միտ արարելոյ այս է (Մեկն., 918): Քան թէ շաղկապական բաղադրութիւնը, երկրորդական նախադասութեան մէջ գործածուելով, զուգադրում է նաեւ գլխաւոր նախադասութեան մէջ յարաբերեալի գործառոյթով Հանդէս եկող ոչ ժխտական մասնիկի եւ այլ ու իմն գերանուններն գործիական Հոլովների (այլով իւրիք) մասնակցութեամբ ձեւաւորուած ոչ այլով իւրիք բաղադրեալ յարաբերականին՝ որ ոչ այլով իւրիք, քան թէ բանի իմն եւ անուամբ սոսկալեալ բժշկիցի (Խոր., 92):

դ) Այլ շաղկապը, եւ ստացուում է այնպէս, որ որոշ կառոյցներում այլ-ը զուգադրութեան երկու կողմում էլ մասնակցում է կապակցման գործընթացին. մի դէպքում իբրեւ յարաբերեալի բաղադրիչ, միւս դէպքում՝ որպէս զուգադրուող շաղկապ, ինչպէս՝ Ոչ այլ որք էր մոցա վարդապետ, այլ որքեզ զաղաթս ուսոյց (Խրատ., 957):

21 Նշուած փաստը վկայում է, որ արդէն Ե. դարում բայց-ը որոշ դէպքերում հանդէս է գալիս որպէս այլ-ի համագիշ:

22 Եւ այլ արարած ոչ գի, որով կերպարանել կարէ՛ ոչ վիշապ եւ ոչ այլ որք, բայց հրեշտակք եւ դեք (Հարց., 152) կառուցի բայց-ը գործածուել է ոչ թէ որպէս շաղկապ, այլ որպէս կապ՝ «բացի» նշանակութեամբ:

2.1.1.1. «Դրական նախադասութիւն-դրական նախադասութիւն» մասնակազապարով բարդ համադասական կառոյցներում այլ շաղկապի միջոցով ձեւաւորուում է արդի հայերէնի «բայց», «սակայն» կամ «իսկ» քերականական իմաստներից որեւէ մէկը³⁰ Եւ սաւ՛ Սաւոյ. «Մեղայ. այլ մեծարեա՛ զիս առաջի ծերոց ժողովրդեան իմոյ, եւ առաջի Իւրայլի (Ա թագ., ԺԵ, 30): Պատասխանի ետ Անքոս եւ սաւ՛ ցԴաիթ. զիտեմ զի բարոք թուիս դու յաչս իմ իբրեւ զհրեշտակս Աստուծոյ. այլ Անխարարք այլազգեացն սաւեմ, մի եկեացէ ընդ մեզ ի պատերազմ (Ա թագ., ԻԹ, 9): Պատասխանի ետ Պարթեան եւ սաւ՛. «Չմնացորդս ազգի իմոյ կեցուցես դու. այլ եւ եղբայր իմ հարազատ այսար հրաժարիմք ի քեմ» (Ագաթ., 20) եւ այլն:

2.1.1.2. «Դրական նախադասութիւն-ժխտական նախադասութիւն» մասնակազապարով բարդ համադասական կառոյցներում եւս այլ շաղկապի միջոցով արտայայտուում է արդի հայերէնի «բայց», «սակայն» քերականական իմաստ՝ Եւ յայնչապի ժամանակաց ընդերկարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք ի մնանէ երկմտեալ բաժանեցաւ (Եղիշէ, 198): ... կայր եւ պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր Աոցա զծածկութիւն խորհրդոցն (Եղիշէ, 57): ... յոյժ զարմացան ընդ իրան, այլ ոչ ինչ իշխեցին հարցանել ցնա, բայց չորքան եւ պատմեցին Դենշապհոյ (Եղիշէ, 157): Առ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի մէնջ (Ա Յովհ., 19): ... որպէս այլուր սաւ՛, հզարք են զարութեամբ ստնել զկամսն Աորա. այլ ոչ եթէ ի բնութեանէ հողմոյ եւ հրոյ են (Եղն., 91):

30 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1, վեներտիկ, 1836, էջ 85: Հմմտ. Պ. Ծարաբխանեան, Աշխարհ, էջ 98: Աստուծոյ ինքնին Աշխարհում է, որ Ե. դարում եւ յետագայում Ակատելիորէն աշխարհում են Աշուած իմաստակիր շաղկապները, մասնատրապէս՝ բայց-ը՝ մի շարք դէպքերում սահմանափակելով այլ-ի՝ իմաստային աւելի լայն գործառնութեանը:

2.1.1.3. «ժխտական նախադասութիւն-դրական նախադասութիւն» մասնակազապարով բարդ համադասական կառոյցներում այլ շաղկապի միջոցով ձեւաւորուում է արդի հայերէնի այլ շաղկապին յատուկ քերականական յարաբերութիւն³¹ Եւ սաւ՛ Սաւոյ, այսպէս սասաջիք ցԴաիթ, եթէ ոչ կամի արքայ վարձանս, այլ (կամի - Գ. Խ.) հարեար անթիւատութիւն այլազգեաց, առնույ վրեժ ի թշնամեաց արքայի (Ա թագ., ԺԸ, 25): Բանգի սասց Սաւոյ, մի եղիցի ձեռն իմ ի նա, այլ եղիցի ի նա ձեռն այլազգեացն (Ա թագ., ԺԸ, 17): ... որպէս արգել զքեզ Տէր չգալ յարիւն անպարտ, այլ պահել զձեռն քո քեզ (Ա թագ., ԻԵ, 26)³²:

Այս խմբի կառոյցների մէջ ժխտական նախադասութիւնը կամ բառակապակցութիւնը շարադասութեամբ սովորաբար նախորդում է այլ շաղկապով զուգադրուող դրական նախադասութեանը: Նմանատիպ կառոյցներն առանձնանում են նաեւ ժխտման գաղափար արտայայտող միջոցների (ընդգծում են) բազմազանութեամբ, որոնցից են՝

ա) Միթէ փառաւորե՞լ ինչ զհարք քո առաջի քո առաքեաց առ քեզ Դաիթ միսիթարիչս. ոչ, այլ զի որոնեացն զքաղաքս, զիտեսցեն զսա. եւ լրտեսել զսա առաքեաց Դաիթ զծառայս իր առ քեզ (Բ թագ., Ժ, 3):

բ) Եւ սաւ՛ արքայ ցլուոնա. Ոչ այդպէս, այլ զնելով զնեցից ի քեմ՝ զնոց (Բ թագ., ԻԳ)

31 Պ. Ծարաբխանեան, Աշխարհ, էջ 97-98: Հմմտ. ժամանակակից արեւելահայերէնում՝ Այնքան էր գեղեցիկ նա, որ թոււմ էր, թէ հողեղէն չէ, այլ մի յաւերժահարս ... (Նար-Ռոս, Ես եւ նա): ... Արանք Ծիրակից չանցան դէպի Գուգարք, ... այլ իջան դէպի հարաւ, մտան Արազաժողով ... (ՄԳՄ, 330):

32 Բացառիկ դէպքերում այլ-ի փոխարէն հանդէս են գալիս ոչ ... այլ եւ, ոչ ..., այլ եւս. անսովոր տարբերակները՝ Եւ ոչ ինչ շուքս դնէր նմա. այլ եւ անարգանս եւս դնէր թշնամանաց (Բուգ., 106): Բանգի եւ զանձն իւր ոչ խնայեաց դնել ի վերայ մեր, այլ կերակուր եւ ըմպելի եւս եղեւ մեզ (Բուգ., 79):

24): Ոչ այդպէս. այլ հաւատով խնդրեցուք, եւ սացի մեզ կերակուր (Բուգ., 78):

դ) Եւ սաւ՛ Բուսի ցԱքեւտողմ, ոչ այսպէս է, այլ զհետ այնորիկ՝ գոր ընտրեաց Տէր ... երթայց՝ եւ Աորա եղէց, եւ ընդ մնա Աստայց (Բ թագ., ԺԵ, 18): Լոնցոյց Բաղէր զժողովորդն ի Մովսիսէ, եւ սաւ՛ ցնոսա. ոչ այդպէս է. այլ ելանելով ելցուք եւ ժառանգեցուք զնա (Թիւ., ԺԳ, 31):

դ) ... վասն այնորիկ ոչ կոխեն քուրմք Դագոնայ ..., այլ քայլելով քայլեն եւ անցանեն (Ա թագ., Ե, 5): ... սակայն ոչ շրջեաց զբանս իւր՝ խաւսել ընդ աղջկանն այլ ինչ. այլ գոր սկիզբն արարեալ էր բանիցն իւրոց առաջնոց՝ զնոյն յանախեալ բազմացուցանէր (Ագաթ., 103):

ե) Մի ազանիցիս զայս գիշեր յԻրաբովք անապատին, այլ փութաւջիր անցանել (Բ թագ., ԺԷ, 16): ... մի մինչեւ յերկինս բարձրացիս. այլ մինչեւ ի դժոխս իջցես (Մատթ., ԺԱ, 23): Մի՛ թողուր զմեզ ի ձեռանէ քումմէ, այլ զարացո՛ր զմեզ ի կամս քո (Ագաթ., 51): Արկին եւ կղերքն ամենայն ձեռնագիր աղաչանաց, զի մի՛ ինչ դանդաղեցի գալ, այլ յարուցեալ փութանակի երթիցէ (Բուգ., 82):

զ) ... եւ զարաւոնացիքն չեն որդիք Իւրայլի, այլ յարենէ ամորհացուցն (Բ թագ., ԻԱ, 2): Նա դու չես իսկ արշակունի, այլ ի պոռնկութենէ եղեալ եւ որդի ...: Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր եւ ի վերոյ քան զձեզ (Բուգ., 203): Ետ պատասխանի Գրիգորիոս եւ սաւ՛. «Ոչ է իմ ժողովարութիւնս տոկալոյդ՝ իմով զարութեամբ, այլ ուժով զնորհի Տեառն իմոյ» (Ագաթ., 66) եւ այլն:

է) Իսկ վասն իմ՝ Արդեաւք եւ ո՛չ էի ի հրամանէ Աստուծոյ ձեզ քարոզ, այլ ի կամս մտա՞ց իմոց. եւ զիա՞րդ հնար էր այնմ լինել (Ագաթ., 128) եւ այլն:

«ժխտական նախադասութիւն-դրական նախադասութիւն» մասնակազապարով բարդ համադասական կառոյցների առաջին նախադասութեան մէջ ոչ-ին յարաբեր կարող է հանդէս գալ եւս սաստկական

վերաբերականը՝ Չի ոչ եւս է այսուհետեւ սաւնէլ, եթէ «տեսից գերկինս զգործս մատանց քոց», այլ թէ տեսից զքեզ Տէր երկնի եւ երկրի (Եղիշէ, 151): Եւ ոչ եւս սասացեմ՝ եթէ կենդանի է Տէր՝ որ եհան գտունն Իւրայլի յերկրէն եւ զիպտացոց, այլ թէ կենդանի է Տէր՝ որ եհան զամենայն զաւակ Իւրայլի երկրէն հիւսիսոյ (Երեմ., ԻԳ, 8)³³:

Բնազրբերում այլ-ով սկսուող դրական եւ նրան նախորդող ժխտական նախադասութիւնները երբեմն հանդէս են գալիս ոչ թէ որպէս մի ընդհանուր բարդ համադասական կառոյցի բաղադրիչներ, այլ իբրեւ առանձին նախադասութիւններ, որոնք, բնականաբար, ստորակէտի փոխարէն տրոհուած են վերջակէտով: Օրինակ՝ Որ կամաքն Բրիստոսի քարոզ գտեալ արդարուոյց՝ ամենեցուն Հայաստան աշխարհիս, չկապել ընդ գարշապարս մեղաց ի ծովանման յաշխարհիս յայսմիկ: Այլ ի հողմախաղաղ լանքոյք Առանհագիստն հասեալ աստուածահարն շինութեան, կենաց մշտնջենականաց անդ պատրաստեաց արթեանս Աոցա (Ագաթ., 14): Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի Նոյէ եւ երրորդ ի Քաւալ՝ ոչ ի մերում թարգմանութեանս եւ ոչ ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք: Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագումէ եւ լընթերցասիրէ ումեննէ Աստուոյ (Խոր., 20) եւ այլն:

2.1.1.4. Այլ-ով սկսուող բազմաթիւ նախադասութիւններում, որոնց չեն նախորդում ժխտական նախադասութիւններ, այլ շաղկապը գերազանցապէս արտայայտուում է արդի հայերէնի «բայց», «սակայն» կամ «իսկ» քերականական իմաստներից որեւէ մէկը³⁴, ինչպէս՝ Այլ մեզ լաւ է մեռանել ի սրբութեան քում, քան թէ ձգիցեմք զձեռս մեր յաստուածս աստարս, որ չիցեն իսկ (Ագաթ., 105): Այլ սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ եւս յաւել տեսանել զերեսս թագաւորին Արշա-

33 Բերումս Ապիստոսիւնների մէջ եթէ-ն եւ թէ-ն ընդհանուր ոչինչ չունեն ոչ եւս ... այլ զուգաշաղկապի հետ:

34 Պ. Ծարաբխանեան, Աշխարհ, էջ 99:

կայ (Բուզ., 105): Այլ որ մարդ էր, եւ ամօթ կայր ի սրտի, եւ զայնպիսի բանս յարեաց տեսանէն լսէր՝ ոչ միայն միանգամ եւ երկիցս եւեթ ի դէպ էր մեռանել (Փարպ., 168): Այլ վասն իմ ոք կոծ մի՛ դիցէ. եթէ դնէ ոք, նա լիցի դատապարտ (Բուզ., 218):

Նշուած տիպի կառոյցներում այլ-ը կարող է արտայայտել նաեւ «արդ», «եւ արդ» կամ «եւ» իմաստ, «...որս կայ եւ զօրութիւն ձայնիս Բայց» (ընդգծումը մերն է - Գ. Խ.)³⁵ Եւ դուք՝ այնպիսիք ոմանք էիք. այլ լուսարարք. այլ սրբեցարարք. այլ արդարացարարք յանուն Տեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ի հոգին Աստուծոյ մերոյ (Ա Կոր., 2, 11):

2.1.1.5. Այլ շողկապի «բայց» իմաստը շեշտուած է նախադասութիւններում, որոնցում այն նախադասուում է սակայն շողկապին³⁶: Օրինակ՝ Այլ սակայն նա ըստ այն մի գիշերն այլ ոչ եմտտ առ կինն իւր (Բուզ., 10): Այլ սակայն ասացից. Ո՞վ ոք ի ձէնջ թռչակս յաղագս մեր, ո՞վ ոք վարդապետացն մտայանս ... (Խոր., 248): Եւ Ատրվզնասպայ լուեալ, թէպէտ եւ գաղտ ի միտս ուրախանայր, կարծեցեալ, թէ հաստատ նուաճումն գան՝ այլ սակայն առ նա խստագոյնս յղեալ ասէր, թէ «Աշխարհ մի ապստամբ առ իս զի՞նչ պատգամ յղեն» (Փարպ., 123):

2.1.1.6. Այլ շողկապի «իսկ» (կամ «բայց») իմաստն³⁷ առաւել ակնյայտ է նաեւ նախադասութիւններում, որոնցում այն նախադասուում է եթէ/թէ շողկապին՝ ... այլ եթէ եկեացեն տանջանք ի վերայ մեր վասն անուան քո՝ պատրաստ եմք (Ագաթ., 105): ... այլ թէ էր, եւ կորուսեալ էին, ուր եւ էր, ջանալաք խնդրեաք գտանեաք (Բուզ., 91): ... այլ թէ ոչ անապարեցես, արքայ, այժմ գրայ

35 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1, վեներտիկ, 1836, էջ 85:
 36 Նոյն տեղում, էջ 101:
 37 Նշելով, որ այլ-ը «գործածուում է նաեւ իսկ-ի նշանակութեամբ» Պ. Շարաբխանեանը նկատում է, որ այդ «կիրառութեամբ այլ-ը բայց-ի իմաստով եւս կարող է հասկացուել» (տե՛ս Պ. Շարաբխանեան, նշ. աշխ., էջ 99):

երկիրս խորհի լնուլ քաղաքօք (Բուզ., 199): Հաւատամք ճշմարտի անգիտութեամբ եւ անհասութեամբ, զի ամենայն ըստ պատկերի Աստուծոյ, այլ թէ որպէ՞ս կամ զիս՞որդ, Աստուծոյ միայն է գիտել (Պրոկղ., 200):

2.1.2. Այլ-ը հանդէս է գալիս նաեւ զուգադիր շաղկապների կազմում, որոնցից են՝

2.1.2.1. Ոչ եթէ ... այլ զուգաշողկապը, որն, ի դէպ, գործածուել է Ե. դարից մեզ հասած սահմանափակ թուով աղբիւրներում, որոնցում, սակայն, առանձնանում է յաճախադէպութեամբ: Օրինակ՝ Իսկ ոչ եթէ առանց սոցա վկայութեան չլինէր արդեաք հաւատարիմ, այլ զի մեծացին սոքա որ սիրեցին գնա (Ագաթ., 123): ... զի ոչ եթէ զքեզ անարգեցին, այլ զիս մերծեցին չթագաւորել ի վերայ նոցա (Ա Թադ., է, 7): ... ոչ եթէ ի հին համբատուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, եւ առընթերակաց հոգեարական գործոցն (Կոր., 76): ... զի ոչ եթէ մարմնական համարէին զկոյն, այլ հոգեւոր առաքինութեան (Եղիշէ, 100): ... իբրեւ ոչ եթէ մարդկան ի դիմի հարկանելոց երթալին, այլ թէ եւ գազանք ինչ անհմարիմ պատահեցեն ... հարկանել սատակել կործանել թափ անցանել (Բ Մակ., ԺԱ, 9):

Երբեմն ոչ եթէ ... այլ զուգաշողկապի փոխարէն գործածուում է վերջինիս ոչ թէ ... այլ տարբերակը³⁸: Օրինակ՝ Չձեռս յերկինս բարձեալ, ի նշանագործ Տէրն կարդայր, որ ոչ թէ ըստ կամս մարդկան, այլ ըստ կամս իրաւանց իւրոց տայ զյաղթութիւն արժանեաց իւրոց (Գ Մակ., ԺԵ, 21): ... զի ոչ թէ անձանց, այլ մեզ մատակարարք (Ա Պետր., 12):

Ոչ եթէ ... այլ - ոչ թէ ... այլ զուգաձեւութիւնն առկայ է անգամ միեւնոյն երկուում: Հմմտ.՝ Եւ ընդ Վահագայ եւ ընդ այլ Հայերդ ոչ եթէ նետի կոտիմ, այլ գողզկով պուղեալ զբո-

38 Հմմտ. ժամանակակից արեւելահայերէնում՝ *Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտուելուն, դա ոչ թէ դատապարտելի է, այլ հէնց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու* (ՅԹ, 4, 98):

լորս ցնդեմ (Փարպ., 152) եւ ... ոչ թէ բերանով բարբառէր, այլ մրտիւն աղաղակէր (Փարպ., 139): ... լուեալ արգելա բանն, եւ ոչ թէ յատղէն, ... այլ ի դոցանէ, զի մի՛ լուիցեն զբան փրկութեան իրեանց (Թուղթ, 201):

... զի ոչ եթէ կամաք ինչ յաժարեցաք հաւանել առնել զայս, այլ իբրեւ ոչ կարի ինչ ընդդէմ մարթացեալ դառնալ արքայատուր հրամանացն, որչափ լուծի կայր՝ մարթացեալ ըստ հրամանացն պատմեցուք (Ագաթ., 6) եւ Բայց իբրեւ զմի ի մէնջ ոչ թէ Աստուած եղեալ. քանզի չէ Էականն լինելով, այլ զկարծեալն լինելոյ սաէ (Ագաթ., 148):

2.1.2.2. Թէպէտ ... այլ զուգաշողկապը, որ եւս յաճախադէպ է: Այստեղ այլ-ը գործածուում է «բայց», «սակայն», «բայց եւ այնպէս» նշանակութիւններով³⁹ Չի թէպէտ էր մարմնով փոքր, այլ ոչ որքան Մակեդոնացին Աղեքսանդր, որ միայն երից կանգնոց ուներ զչափ հասակի (Խոր., 265): Եւ թէպէտ էութիւն չունի մշտակալ, այլ Աստուած սահմանեաց նմա բնութիւնն անդրէն յարաչութեանն (Մեկն., 912): ... թէպէտ ըստ չափուցն Պտղոմէի երկայնատարած յարեւելս կոյս, այլ զերկու չափս ի մի դնելով նկարագրեցուք (Խոր., Աշխ., 2165): Չի թէպէտ զմեղս ամենեցուն երարձ, այլ ինքն ոչ ախտացաւ (Անան., 1147) եւ այլն:

Երբեմն թէպէտ ... այլ զուգաշողկապի փոխարէն գործածուում է վերջինիս թէպէտ եւ ... այլ տարբերակը⁴⁰, որտեղ եւ-ի միջո-

39 Հմմտ. ժամանակակից արեւելահայերէնում՝ *Թագուհին թէպէտ կարող էր ամրոցի բանալիներն ընդմիջտ հաւատալ նրան, իբրեւ բերդակալի, բայց ... կարգադրել էր, որ ամրոցի դռները փակելոց յետոյ բանալիները դռեակ բերուեն* (ՄԳՄ, 15): ... *աստուած, թէպէտ երբեմն ուշ, բայց եւ այնպէս, պատժում է յանցատուներին ...* (ՄԳՄ, 118): *Թէպէտ հրշէջների խումբը շրջապատեց իսկույն վառուղ աշտարակը եւ թափեց նրա վրայ իւր այծատիկների ջուրը, սակայն կրակը հանգցնել չկարողացաւ* (ՄԳՄ, 242) եւ այլն:

40 Հմմտ. ժամանակակից արեւելահայերէնում՝ ... *թէպէտեւ ճանաչելիս լինէին իրար՝ պ. Մարտիրէն եւ Կարօ Դարայեանը, բայց չէ՞ որ դրանից յետոյ այնքան էր ջուր հոսել, եւ այն էլ տարբեր*

ցով շեշտուում է թէպէտ-ի արտայայտած զիջման քերականական իմաստը, եւ այլ-ն այստեղ կարող է գիտակցուել նաեւ «այստուամենայնիւ» նշանակութեամբ⁴¹: Օրինակ՝ Չի թէպէտ եւ մարմնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք ... (Բ Կոր., Ժ, 3): Բայց նա թէպէտ եւ ի ներքոյ լոյծ դարովէր զնա, այլ արտաքին դիմաք մեծարեաց (Եղիշէ, 90): ... թէպէտ եւ զարհուրեցար, այլ ոչ ի փախուտ դարձար (Խրատ., 970): Չի թէպէտեւ հասարակաց էր տեղին, մանաւանդ Ղազարու քան քերցն, այլ կենդանեացն ի դէպ էր զտեղին կոչել քան մեռելոյն (Մամբրէ, 1108): Չի թէպէտ եւ մահու չափ ծանրագոյն եւ ընչասպիրացն ողորմութեանն հրամանք, այլ առաւել շահատր եւ եւ ազատակար քան զամենայն վարձուց առաքինութիւնս (Մանդ., ձառք, 1177-1178) եւ այլն:

Թէպէտ ... այլ - թէպէտ եւ ... այլ զուգաձեւութիւնն առկայ է անգամ միեւնոյն երկուում: Հմմտ. Եւ սոցա զգացեալ՝ կէսքն զինեալք եւ կէսքն թէպէտ անպատրաստք էին, այլ օգնութեամբն Բարձրելոյն քաջալերեալք՝ հարկանէին ի դիմի աներկիւղապէս (Փարպ., 127) եւ Չի թէպէտ եւ իցէ պոռնիկ, այլ զկնիք հօտին Բրիստոսի կրէ յանձին իրում (Փարպ., 22): ... զի թէպէտ առ ժամանակ մի վասն այց երկուց պատճառանաց ընդ մահուամբ անկանիցի, այլ, ըստ իրում կարողութեան, յարուցէ միսանգամ (Եզն., 75) եւ Թէպէտ եւ անմահ բնութեամբ աստուածութիւնն եւեթ է՝ որ մշտնջենատրն է, ... այլ եւ սկզբնատրացն

հուներով, որ ոչ մի հնարատրութիւն, թուում է թէ չպիտի մնար նրանց մտերմանալուն (ԵՁ, 4, 89): Նրանք բոլորն էլ անհոգ թոչունների նման թափառում են, թէպէտեւ Նաիրիից դուրս գտնուող, բայց համարեա Նաիրեան չքնաղագոյն մի քաղաքի յազուր երկնքի ներքոյ (ԵՁ, 4, 176) եւ այլն:

41 Այլ-ը համարելով շաղկապ՝ Մ. Աւգերեանը դնում է նրա՝ 1. «հակա» եւ 2. «պստ ամենայնի» նշանակութիւնները (Մ. Աւգերեան, Առձեռն բարարան հայկազեան լեզուի, Ագթիխաս, 1988, էջ 53), որոնցից վերջինը (ներկայ ըմբռնմամբ) վերաբերականներին է յատույ:

եւ բանատրաց պարգետեաց աննախանձ զան- մահութիւն (Եզն., 101) եւ այլն⁴²:

2.1.2.3. Ոչ միայն ... այլ եւ զուգաշաղ- կապը⁴³, որը նոյնպէս առանձնանում է յա- ճախադէպութեամբ: Այստեղ այլ եւ-ը գոր- ծածուկ է որպէս՝

ա) տարբեր ենթակայնորով ու տարբեր ստորոգեալներով կազմուած բարդ Համա- դասական կառոյցի վերջադաս նախադա- սութեան կապակցման միջոց: Օրինակ՝ ... ոչ միայն ի գարդ գլխոյ թագաւորին բովանդա- կի առ ի տես այլոցն, այլ եւ զամենեսեան զար- դարէ, զամենեսեան լուսատրէ, զամենեսեան լցուցանէ (Ագաթ., 7): Ամենայն քաղաքք եւ ամենայն դաւառք ... ոչ միայն՝ ի մարդ- կանէ անապատ լիցի, այլ եւ զազանք երկրի եւ թռչունք երկնից՝ մինչեւ յախտեան ի բաց մեր- ժեալք ընկեցին (Եսթ., ԺԶ, 24): Ոչ միայն մարդիկն աղաղակիցեն, այլ եւ պարիսպքն եւ յատակքն հնչիցեն (Գ Մակ., Ա, 14):

բ) Պարզ նախադասութեան բազմակի անդամներից վերջինի կապակցման միջոց: Օրինակ՝ Իսկ բարերարն ոչ միայն ի դրախ- տին, այլ եւ արտաքոյ անոթն չհեռանայր ի ան- ցանէ, յորժամ յանդիման դրախտին բնակեցու- ցանէր (Ագաթ., 150): Եւ ոչ միայն զօրական պատերազմողք, այլ եւ մշակք որ գործեն զեր- կիր. յորժամ սերմանեն եւ հնձեն, զարդիւնս ի- րեանց բերեն թագաւորին (Ա. Եղբ., Դ, 6)⁴⁴ եւ այլն:

42 Նմանատիպ կառոյցներում թէպէտ ... այլ-ի փո- խարէն հագուադէպ գործածում է թէպէտ... այլ եւ՝ ... գոր թէպէտ ըստ տկարամտութեան մերոյ ոչ եղեաք բաւական յիշել գրովանդակն ի կար- գի, այլ եւ ոչ բնաւ գտեալ անյուշք՝ յայաղեալ մոռացաք ինչ ծովանալով (Փարպ., 105):

43 Պ. Շարաբխանեան, ԱԶ. աշխ., էջ 95: Հմմտ. ժա- մանակակից արեւելահայերէնում՝ Դեռ շատ պատմական տեղեր ... մնացել են անյայտ ոչ միայն գիտնական աշխարհին, այլեւ մեր գրա- գէտներին (ՅԹ, 4, 7):

44 Բնութագրելով այլեւ յանելական-միատրական շաղկապը՝ Պ. Շարաբխանեանը ԱԶում է, որ Արա հետ «...սերտօրէն կապուած է ոչ միայն-ը ...: ...Այս երկուսը (նկատի ունի ոչ միայն ... այլեւ գու- գաշաղկապը - Գ. Խ.) միմեանց հետ կազմում են

զ) Նոյն ենթակայով ու տարբեր ստո- րոգեալներով ձեւաւորուած նախադասու- թիւններից վերջինի կապակցման միջոց: Օրինակ՝ ... մանաւանդ երանութեամբ իսկ պատկեր ոչ միայն սեպհականացն զերկոտա- սանիցն, եւ կամ զյառաջամուտ զԿարապետին, այլեւ զայլոց մատուցելոցն գովէ զհաւատոցն ճշմարտութիւն (Կոր., 30): Բայց ո՛չ միայն զերանելոյն զաւգնականութիւնսն յարգէ, այլ եւ զքրիստոսամեծար ասպնջականիցն իրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ (Կոր., 32):

Հէնց Ե. դարի լեզուական աղբիւրնե- րում քիչ չեն այն կառոյցները, որոնցում ոչ միայն, այլ եւ-ի փոխարէն զուգադրութիւ- նը կատարուած է ոչ միայն, այլ տարբերա- կով⁴⁵: ... ո՛րչափ եւս առաւել պատշաճ իցէ զաստուծոյ իմանալ, թէ ոչ միայն արդոց եւ զարդոց եւ կերպարանաց արարիչ է, այլ յուճ- չէ առնել բաւական է բնութիւնս (Եզն., 25): ... զի ոչ միայն այսօր յայտնեցաւ իմաստութիւնդ քո, այլ յաւուրցն առաջնոց գիտաց ամենայն ժողովուրդդ զհանճարդ քո (Յուդ., Ը, 28): ... ոչ միայն ի բաց մերժեցին զերեւելի պատիւ մե-

պնայիսի կայուն գուցադրութիւն, որ առաջինը եր- քեք չի գործածում առանց երկրորդի» (Պ. Շա- րաբխանեան, ԱԶ. աշխ., 97): Սակայն լեզուական փաստերը վկայում են, որ ոչ միայն-ը կարող է գործածուել նաեւ առանց այլեւ-ի: Ահաասիկ մէկ- երկու օրինակ՝ Տեսանէ՞ս զի մարմնով հանդերձ սաւէ կրել զբարին կամ զշարիս, եւ ոչ միայն ոգ- տովք (Եզն., 292): Բայց յաւ է նախանձատր յիմել ի բարիս յամենայն ժամ, եւ ոչ միայն յորժամ ի ձե- րում միջի իցես (Գաղ., Դ, 18): Իբրեւ եկն եհաս յերկիրն Եգիպտացոց եւ զշարութիւնն եւս քան զեւս յանձն իւր անեցուցանէր՝ տաճարակից ընկե- րովքն իւրովք մեկնելովք յամենայն իրաւանց, եւ ոչ միայն անթիւ աղտոտութեամբքն չյագեցաւ, եւ յայնչափ յանդգնութիւն հասանէր, զի հայրնոր- թեամբ գտեղին ընդոյ, զի բազումք ի բարեկամաց անտի իբրեւ ընդ թագաւորն նայէին, եւ ինքեանք զհետ երթային կամաց անոր (Գ Մակ., Բ, 13):

45 Նոր բառգիրք հայկազգեան լեզուի. հտ. 1, Վենե- տիկ, 1836, էջ 85: Հմմտ. Պ. Շարաբխանեան, ԱԶ. աշխ., էջ 96: Թէեւ արդի հայերէնում ոչ միայն ... այլ գուցադրութիւնն անընդունելի է, սակայն տեղ է գտնում գրատր, աւելի յաճախ՝ բանատր խօսքում:

ծարանաց ընկերութեանն, այլ գարշին եւ մա- րագեն եւ պիղծ համարին բանիւք եւ լոու- թեամբ (Գ Մակ., Գ, 15): ... եւ ոչ միայն Հա- յոց, այլ բազմաց այլոց թագաւորաց լինէր մա- հաբեր (Խոր., 138):

Նշուած զուգաձեւութիւնն առկայ է միեւնոյն երկուս: Հմմտ. Մեք ոչ միայն խե- դանաց եւթօ պատրաստ ենք վասն անուանն Քրիստոսի, այլ եւ քերանաց եւ մահու (Փարպ., 105) եւ ... այլ յառաջ քան զաւուրս տասն՝ թոռով երեսուն արամբ ոչ միայն ի վե- րայ այսր բազմութեան ... յարձակեալ կոռու- ցաւ, այլ աւելի եւս գնդաւ իշխանն Սիւնեաց Գոհիհովն իւր գաւառին այրընտիր ձիով աստ էր (Փարպ., 156):

2.1.2.4. Ոչ եւթօ ... այլեւ զուգաշաղկա- պը⁴⁶, որն առանձնանում է Հազուադէպ կիրառութեամբ: Յատկանշական է, որ Ղազար Փարպեցու եւ Եզնիկ Կողբացու երկերում նշուած կապակցութիւնը կիրա- ուուել է 1-ական անգամ: Ընդ որում, Ղա- զար Փարպեցին գործածում է ոչ եւթօ, այլ եւ տարբերակով, իսկ Եզնիկ Կողբացին՝ ոչ եւթօ, այլ: Ահաասիկ՝ Եւ ոչ գմեր եւթօ զոգոց խնդրեմք զօգոտն, այլ եւ ընդ այլոցն խնդանք ընդ փրկութիւն (Փարպ., 59): Ջի խնդրելն զաստուած «գովութեան արժանի էր, եւ ոչ զմին եւթօ, այլ բազումս մոծանել, անհնարին ամբարշտութիւն» (Եզն., 202):

46 Պ. Շարաբխանեանը ոչ միայն շաղկապի քննու- թեան շրջանակում ԱԶում է. «Ոչ միայն-ի փոխա- րէն յաճախ (ընդգծումը մերն է - Գ. Խ.) կիրառ- ւում է նոյն նշանակութեամբ՝ ոչ եւթօ...» (Պ. Շա- րաբխանեան, ԱԶ. աշխ., էջ 96): Նկատենք, սա- կայն, որ յաճախակի կիրառութեան մասին ա- տուածը իրականութեանը չի համապատասխա- նում: Բանն այն է՝ Ղազար Փարպեցու «Պատմու- թիւն Հայոց» երկում ոչ ... եւթօ, այլ (եւ) կապակ- ցութիւնը գործածուել է ընդամենը 2 անգամ, մինչդեռ ոչ միայն, այլ կապացութիւնը՝ 19 ան- գամ: Իրական պատկերն այն է, որ Աստուա- ծաշնում եւ Ե. դարի հայ հեղինակներից Ազա- թանգեղոսի, Խորենացու, Բուզանդի եւ Եղիշէի պատմութիւններում ոչ եւթօ ... այլ (եւ) գուցա- շաղկապի կիրառութեան դէպքեր ընդհանրա- պէս չկան:

Նմանատիպ երկու կառոյց էլ գործա- ծել է Եղիշէն (ոչ «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկում, այլ «Մեկ- նութիւն արարածոց»-ում), որոնցում աչքի է զարնում ոչ եւթօ ... այլ եւ - ոչ եւթօ ... այլ զուգաձեւութիւնը՝ Այլ եւ նախանձելի ... եւ բաղձալի՝ ոչ մարդկան եւթօ, այլ եւ հրեշտա- կաց սրբոց (Մեկն., 896): Յորժամ սուրբ մտաք հալի որ՝ ոչ ասող եւ եթ, այլ՝ տեսող հա- մարեացի (Մեկն., 772):

Եզնիկ Կողբացու եւ Ղազար Փարպե- ցու երկերում ոչ եւթօ, այլ զուգաշաղկապի փոխարէն մի քանի անգամ կիրառուել է ոչ միայն եւթօ ... այլ տարբերակը՝ Քանզի եւ ինքն իսկ Շապուհ ոչ միայն ի լոյս եւթօ գիտեր զնոցա պնդութիւն յաղագս քրիստոնէութեան, այլ ինքն իսկ որպէս իսկ ձեռնասուն որդւոյ՝ տեղեակ էր նոցա ամենայն իրաց, եւ քրիստո- նէութեան պնդութեան, եւ յայս ամենայն հրա- հանգս եւ ի միտս (Փարպ., 147): ... չեւ դեռ եւս յայնմ ժամու կամեցեալ յայտնել զբանսն ի- րեանց մարգպանին Հայոց Վասակայ, գիտե- լով ոչ միայն լոկ վասն որդոցն եւթօ զկա- սումն առն ի փրկութեան դարձէն, այլ զառաւել փառասէր սատուածատեաց խորհրդոց անոր անաշխալ զորոճմունս ... (Փարպ., 60): ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսացն եւթօ արշալին, այլ յամենայն կողմանս վարզին, եւ ընդ հանուր արշալին, եւ ընդ բնասս պանան, եւ ամենայնի բաւական են (Եզն., 18): Բերուած կառոյցներում նախանշուած է ոչ եւթօ, այլ եւ զուգաշաղկապի առաջացումը ոչ միայն եւթօ ... այլ եւ-ից⁴⁷:

Փարպեցու երկում առկայ է նաեւ ոչ միայն եւթօ ... այլ եւ-ի կիրառութեան 2

47 Գրաբարում եւ աշխարհաբարում գործածական է նաեւ միայն եւթօ-ը: Հմմտ.՝ Եւ նախ առաջին՝ որպէս Հայոց մեծ աշխարհն պիտոյ է եւ օգուս- կար, եւ առ միմ Վրաց եւ Աղուանիցն, եւ միայն օգտիցն եւթօ հայիք, զոր ընդունիք յաշխարհացն (ՂՓ, 42) եւ ... ոչինչ՝ նրանց համար աշխարհիս երեսին գոյութիւն չունէր, բացի իրենց այդ սի- րուն, հրեշտակային փոքրիկ աղջկանից, որի մէջ միայն եւթօ նրանք կենտրոնացած էին տեսնու մ իրենց գոյութիւնը (Նար-Պոս, Բնքուն շարեր):

դէպք՝ Ոչ միայն ... գայն եւեթ հոգալ պարտ է տերանց, այլ եւ յաղագս գիւտի ոգւոց արժան է գմտաւ ածել (Փարպ., 49): Մեք ոչ միայն խեղանաց եւեթ պատրաստ եմք վասն անուանն Քրիստոսի, այլ եւ քերանաց եւ մահու (Փարպ., 105):

2.2. Ոչ նիւթական իմաստի դէպքում այլ-ի միջոցով կարող է արտայայտուել նաեւ խօսքի հեղինակի տրամաբանական, դատողական վերաբերմունք, այն է՝ այլ-ը կարող է գործածուել իբրեւ վերաբերական՝ արտայայտելով արդի հայերէնին ժառանգուած էլ վերաբերականի իմաստներէց մէկը («ես»/«նաեւ»), ինչպէս՝ Այլ գկուոս կոնալս, կոսիեալս, քերեալս եւ արարեալս՝ ոչ կալալ երբեք առ աստուածս, եւ մի՛ լիցի այլ ունել⁴⁸ մինչեւ իցէ շունչ իմ ի մարմնի իմում (Ագաթ., 65): ... այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբեք որ թագ ունի, եւ ոչ ձգեմ, եւ մի՛ այլ ձգել լիցի (Բուզ., 167)⁴⁹: Եւ արդ ոչ կարեմք պսմ գծոյժ ունել. եւ ոչ այլ կարեմք տալ ճակատս (Բուզ., 137)⁵⁰: Որ իբրեւ գրանդերձ կարծեր ունել մեզ գրիստոնէութիւնն, արդ իբրեւ գգոյն ի մարմնոյ չկարէ շրջել, թերեւս եւ ոչ այլ կարասցէ մինչեւ ի կատարած (Եղիշէ, 103):

Հարկ է նշել, որ այլ-ի՝ վերաբերականի դերով հանդէս գալը Ե. դարում նոր միայն ձեւաւորուող իրողութիւն է, որն ինչ-որ չափով առնչուում է նաեւ մակբայ խօսքի մասին: Ասուածի օգտին առաջին հերթին վկայում է այն, որ նշուած իմաս-

48 Այսինքն՝ «բայց կուտքերին ... երբեք չհամարեցի աստուածներ եւ չեմ էլ համարի» (բառացի՝ չի էլ լինի համարել - Գ. Խ.): Հմտ. ժամանակակից արեւելահայերէնում՝ Գնում ես, չես էլ ասում, Թէ մէկ էլ երբ ես գալու, Եկար էլ, Ի՞նչ իմանամ, Ո՞ւմ մօտ ես մեղքդ յալու (ՀՄ, 2, 69):

49 Հմտ. «... ոչ ձեռք եմ մեկնել, ոչ մեկնում եմ եւ ոչ էլ կմեկնեմ» (ընդգծումը մերն է - Գ. Խ.) (Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1968, էջ 241):

50 Հմտ. մե՞ք այլեւս չենք կարող դիմանալ, ոչ էլ (ընդգծումը մերն է - Գ. Խ.) դուրս գալ պատե-րազմի (Փաւստոս Բուզանդ, էջ 208):

տով այլ բառի կիրառութեան դէպքերը Ե. դարի լեզուական աղբիւններում հազուադէպ են⁵¹:

Ամփոփենք: Ե. դարում այլ բառն առանձնանում էր խօսքիմաստային եւ գործառական բաղմապլանութեամբ. նրանով կարելի էր արտայայտել մի դէպքում նիւթական, միւս դէպքում՝ ոչ նիւթական բառային իմաստ: Որպէս նիւթական իմաստակիր միաւոր՝ այլ-ը Ե. դարի լեզուական աղբիւններում հանդէս էր գալիս որպէս դերանուն՝ ցոյց տալով առարկայի կամ յատկանիշի չտարբերակուած յատկանիշ: Որպէս ոչ նիւթական իմաստակիր միաւոր՝ այլ-ն արտայայտում էր նախադասութիւնների կամ նախադասութեան անդամների յարաբերութիւն կամ էլ դատողական վերաբերմունք: Այլ բառի դերն առանձնապէս ակնառու է նախադասութեան անդամները եւ նախադասութիւնները կապակցող միաւորների (չաղկապներ, շաղկապական բառեր եւ այլն) շարքում, որտեղ նա հանդէս էր գալիս մի դէպքում միայնակ, միւս դէպքում՝ նրան ինչ-որ նրբերանգ հաղորդող բառ(եր)ի յարադրութեամբ, իսկ երբ բառերի յարադրութեամբ կարող է գուգադրուել այլ բառ(եր)ի:

Շնորհիւ բաղմիմաստութեան՝ այլ բառն առանց հնչիւնափոխութեան եւ հնչիւնափոխուած տարբերակներով, իմաստային եւ գործառական բաղմապլանութեամբ աչքի է ընկնում նաեւ միջին եւ ժամանակակից հայերէնում:

51 Թէեւ վերը նշել ենք, որ Նոր հայկագեան բառարանի հեղինակների կողմից առանձնացուել են այլ-ի «նաեւ», «ես» նշանակութիւնները նոյնպէս (հտ. 1, էջ 85), այսուհանդերձ նկատենք, որ ասուածը հիմնաւորող երկու օրինակներն էլ քաղուած են ուշ շրջանի լեզուական աղբիւրներից՝ ոչ համարեցան գիւրջեանս այլ ընդ քանանացիսն (Արիստակէս Լաստիւրեցի, ԺԱ. դար): Եւ նոքա այլ հասին անողորմք ի վերայ թշուառկանացս (Ներսէս Լամբրոնացի, ԺԲ. դար):

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՍՆՈՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ագաթ. - Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Անան. - Անանիա Թարգմանիչ, Ի խորհուրդ կատարմանն առաքելոյն Պետրոսի, Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Բուզ. - Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Գիրք Աստուածաշունչք հին եւ նոր կտակարանաց, Վեներտիկ, 1860:

Դ.Հ. - Դաւիթ Հարբացի, Յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս, Մատենագիրք Հայոց, հտ. Ե, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005:

Դ.Ք. - Մատենա գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, Երեւան, 1997:

Եզն. - Եզնկա Կողբացոյ Եղծ աղանդոց, Վեներտիկ, 1826:

Եղիշէ - Եղիշէի վասն վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957:

Ե2 - Եղիշէ Չարեան, LXXX, Հատընտիր, Երեւան, 1977:

Ե2, 4 - Եղիշէ Չարեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 4, Երեւան, 1987:

Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

Խոր., Աշխրհ. - Մովսէս Խորենացի, Աշխարհացոյց,- Մատենագիրք Հայոց, հտ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Խրատ. - Եղիշէ, Խրատք,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Կոր. - Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941:

Հարց. - Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթեի, Դարձեալ հարցումն եւ պատասխանք նորս,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

ՅԹ, 1 - Յովհաննէս Թումանեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 1, Երեւան, 1969:

ՅԹ, 2 - Յովհաննէս Թումանեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 2, Երեւան, 1969:

ՅԹ, 4 - Յովհաննէս Թումանեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 4, Երեւան, 1969:

Հոփի. - Մովսէս Խորենացի, Պատմութիւն սրբոց Հոփիսիմեանց,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

ՀՄ, 2 - Համօ Մահեան, Երկերի ժողովածու երկու հատորով, հտ. 2, Երեւան, 1976:

Մամբրէ - Մամբրէ Վերծանող, Մառք,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Մանդ., Մառ.- Յովհան Մանդակունի, Մառք,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

ՄԳՄ - Մուրացան, Գեորգ Մարգարեանի, Երեւան, 1960:

Մեկն. - Եղիշէ, Մեկնութիւն արարածոց,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Յճիւ. - Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատմ ճառք,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

ՆՀԲ 1, 2 - Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Նոր քառօրեք հայկագեան լեզուի, Վեներտիկ, 1836-1837:

Պրոկլ. - Պատասխանի թղթոյն Պրոկլի երանելոյ, Ի Սահակայ եւ Ի Մաշդոցէ, սուրբ վարդապետացն Հայոց,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Փարպ.//Թուղթ - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ՓՏ - Փիլոն Տիրակացի, Ժամանակագրութիւն,- Մատենագիրք Հայոց, հտ. Ե, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005:

Յճիւ. - Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատմ ճառք,- Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Библия, Книги священного писания ветхого и нового завета, Объединенные библейские общества, 1992.